



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՌԻ ՄԱՐԶ

ՀԱԳՎՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 – 2016ԹԹ-Ի
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՍՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար  Հ. Մայիլյան
Հաստատվել է Հագվու համայնքի ավագանու 26.02.2013թ-ի թիվ 07 որոշմամբ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- | | |
|---|-----|
| 1. Ինչ է քառամյա ծրագիրը ----- | 3 |
| 2. Համայնքի նկարագիրը ----- | 4-7 |
| 3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները ----- | 8 |
| 4. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների
առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում----- | 9 |

1. ԻՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: